

ՌԻՍՈՒՅԶԱՊԵՏ ՎԱՀԱՆ ԹՈԹՈՍԵԱՆՅ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅԱԳԷՏ

Հեղինակը.

Մոսկուայի Համալսարանի ուսուցչապետը՝ Վ. Թոթոմեանց այս վերջին ափսոսանքով մեջ՝ Հոսմի մէջ հաստատուած ըլլալով, ժրաշանք գործունէութեամբ ետեւէ ետեւ զրակսն և տնտեսագիտական աշխարհի կ'ընծայէ նոր և հետաքրքրութեամբ լի գրքեր՝ խալերէն լեզուով, որոնցմէ յիշատակութեան արժանի են «Տնտեսական Հայաստանը» (Armenia Economica) և «Համագործակցութիւնը Ռուսիոյ մէջ» (La Coopération in Russia), հմուտ մտայնութեան մը արտադրութիւններ, որոնք խալացի մեծահոգակ և հայասեր Լ. Լույսցադդի նախարանները կը կրեն:

Բազմաշուտ հեղինակը խալիա եկաւ անցեալ տարի՝ առողջութեան պատճառաւ, փախչելով պօլշիվիկութեան արհաւիրքներէն. և խալական գեղիցի կլիմային տակ՝ կրցաւ իր ուսումնական առանձնութեան մէջ զբաղիլ համագործակցութեան իր նախընտրած նիւթով, ջանալով դուրս ցայտեցնել անոր օգտակարութիւնը և ցոյց տալ անոր ըրած մեծաքայլ յառաջդիմութիւնները Ռուսիոյ մէջ...

Զուարճարան տնով Լույսցադդի ըսած է իրեն համար՝ թէ շատ հոգիներ ունի, քանի որ ոչ միայն շատ լեզուներ և զրականութիւններ կը խօսի կը ճանչնայ, այլ անսխալ կերպով կը գրէ իսկ. շատ լաւ կերպով կը գրէ խալերէն և ֆրանսերէն լեզուներով, առանց յիշելու հայերէնը և ռուսերէնը՝ որոնց մասին քնաւ տարակոյս չի վերցնիր:

Թոթոմեանց ծնած է Աստրախան 1875 Յունուար 21ին. իր հայրը՝ հայ երկրաբանական վարժարանի մը տեսուչն էր:

Ինքը Լիկէնական ուսմունքները Աստրախանի մէջ կատարելէ վերջ, անցաւ արտասահման համալսարանական շրջանն ընելու նախ Զուիցերի՝ ի ժընէվ և ի Յուրիխ, ապա ի Պեուլին և ի Պրիւքսէլ, ուր 1898ին ընդունեցաւ ընկերական գիտութեանց Դոկտոր տիտղոսը: Նոյն տարին փոխադրուեցաւ Բիեղրոկրատ՝ ուր գրականութեան նուիրեց ինքզինք՝ շատ մը ընկերական գիտութեանց թերթերու մէջ գրելով. 1899ին հրատարակեց համագործակցական առաջին գրքոյը, և «Համագործակցութեան գործարիւնը» անունով, որուն յաջորդեցին 1901ին երկու հատորներ՝ մին ռուսերէն՝ արտասահմանի մէջի սպառումի գործակցութիւններու (cooperative di consumo) վրայ (որուն 4րդ տպագրութիւնը, կատարուեցաւ 1918ին, «Պատմութիւն, տեսական վարդապետութիւն և գործնականութիւն սպառումի գործակցութիւններու» անունով) և միւսը «Տնտեսական Հայաստանի» վրայ, զոր նորանոր հետազոտութիւններով և դատողութիւններով հրատարակեց խալերէն լեզուով ի Հոմմէ Հրատարակեց նաև ուրիշ երկու գրքեր, մին՝ «Եւրոպայի մէջ երկրաբանական գործակցութիւնը» և միւսը՝ «Գործակցութեան վարդապետութիւնը»:

Ուս. Թոթոմեանց զբաղած է նաև իւտալիայով, և 1901ին հրատարակած է այս նկատմամբ յօդուած մը L'Union ֆրանսերէն թերթին մէջ. և յաջորդաբար ուղղած է իտալիոյ շարք մը ուսմունքներ՝ նկարագրելով հաւաքական վարձքերը՝ «Neue Zeit» ի և ռուսական թերթերու մէջ:

Բրօքսէլանտի համար՝ 1902էն 1910 բոլոր Ռուսիա շրջեր է, սորվեցնելով ժողովուրդին գործակցութեան սկզբունքները:

Յամին 1910 ուսուցչապետ կը կարգուի նախ Մոսկուայի և ապա Բեդրոկըատի համալսարաններուն:

Վիէվի համալսարանը զինքը կ'անուանէ Դոկտոր քուդարական տնտեսագիտութեան, լոնտրայի միջազգային գործակցական դաշնակցութեան Յանձնաժողովին և խորհրդատու Մոսկուայի սպառումի գործակցախումբերու Դաշնակցութեան:

Տնտեսական Հայաստանը

Այս է երկու հատորներէն առաջինը զորս հրատարակած է Թոթովմանց վերջիս իտալերէն լեզուով, Հեղինակը այս երկատիրութեամբ կը ցայտեցնէ բարոյական և տնտեսական արժանիքները մեր Հայաստանին՝ զոր քաղաքակրթութեան նախազգացներէն մին կ'անուանէ Լուցցադդի գրքիս յառաջարանին մէջ:

Այս օրերուս՝ երբ Հայաստանի պիտի տրուի իր անկախութիւնն և ազատութիւնը, շատ հետաքրքրական է Թոթովմանցի այս հատորը, որովհետեւ յայտնի կը տեսնուի թէ մեր հայրենիքը՝ ազգերու ընկերութեան մէջ նշանակալից դիրք մը պիտի ունենայ:

Առանձին զլուխներու բաժնուած՝ կը խօսի Հայաստանի տնտեսական կարևորութեան, իր բնական հարստութեանց, իր մշակութեան և արուեստին, հաղորդակցութեան ճամբաներուն և հարկերու հաւաքելակերպին վրայ. կ'ակնարկէ Հայաստանի և իտալիոյ տնտեսական յարաբերութեանց, և վերջին մասին մէջ՝ կը ցուցնէ թէ ինչպէս գործակցութիւն և փոխադարձ օգնութիւնը (mutuo soccorso) թէ՛ և նախնական ձևով՝ մեծ զարգացում գտած են մեր երկրին մէջ: Որինակի համար՝ շատ տարածուած է ընկերական կաթնատուններու գործակցութիւնը՝ կարագի, սերի և պանիրի պատրաստութեան համար, ինչպէս նաև պարտիզպաններու գործախումբեր՝ պտուղներու պահպանութեան և մշակական բերքերու արտածման մասին: Կան նաև, կ'ըսէ, 150ի չափ մշակային արտադրութեան և սպառումի գործախումբեր: Մեծ փողովդական Դրամատուն մ'իսկ

կը գտնուի Երևանի մէջ՝ որ զեղջկական փողրիկ զրամագլուխներու հաւաքումն է:

Գիւղացիներու գործակցութեան մէջ բոլորականութիւնը գործը յառաջ կը վարէ Բագուի հայ տնտեսաւարաց շրջանակը. հոս կը գտնուի նաև դրութեան և մեծաքանակ գնումներու գործախումբերու Դաշնակցութիւն մը: Հեղինակը կը յուսայ որ մեր ազգը շուտով պիտի վերականգնի տնտեսապէս և բարոյապէս՝ յետ դարաւոր կեղեքումներուն, այս գործակցութեան արդեամբ, որ պիտի միացնէ հարուստը, աղքատը և ժողովուրդը միմեանց հետ:

Աւս. Թոթովմանցի կարծիքները գործակցութեան մասին.

Աւելի քան 200 էջերով կազմուած «գործակցութիւնը Ռոսիոյ մէջ» հատորը՝ հեղինակին վերջին գրութիւնն է իտալերէն լեզուով: Կը սկսի նախ՝ ջանալով սահմանել համագործակցութիւնը կամ աւելի համառօտ, գործակցութիւնը. բազմաթիւ սահմաններ յիշելէ վերջ, կը հանգի Gideի սահմանաւորման վրայ թէ «գործակցութիւնը համախմբում մ'է՝ շահերը վերցնելու նպատակով»:

Գործակցութեան և ազատ մրցակցութեան (libre concurrence) միջև եղած յարաբերութեանց շուրջ՝ կ'ապացուցանէ Թոթովմանց թէ այդ մրցակցութիւնը գործակցութեան համար շատ կարևոր է, զրեթէ հարկաւորութիւն մը՝ իր զարգացման համար, ըլլալով կատարելագործութեան խթան մը:

Բաց աստի, կը դիտէ հեղինակը թէ գործակցութիւնն աւելի կարևորութիւն կ'ընծայէ անհատին, մինչդեռ մարքսականութիւնը զայն կ'անտեսէ:

Գալով գործակցութեան և դասակարգի կոճիններու միջև եղած յարաբերութեան, հեղինակը կը մերթէ թէ գործակցութիւնը դասակարգի կռուին ծառայէ իբրև գործիք մը. ընդհակառակն գործակցախումբերուն մէջ շատ անգամ տարբեր և նոյն իսկ քաղաքացի (bourgeois) դասակարգերու մարդիկ կը գտնուին. որով գործակցութեան

մէջ կը մտնեն առէն անոնց որ դասակարգի եսասիրութեան վեր կը համարին ինքզինքնին, ուստի կը հետեցնէ թոթովեանց թէ գործակցութեան մէջ տեղի կ'ունենայ կենսական ստեղծագործման յատուկ՝ բոլոր տարրերուն բնական ընտրականութիւն մը:

Շարունակելով լուծել գործակցական շարժման և ընկերական ուրիշ շարժումներու միջև եղած պարագաները, հեղինակը կը ցայտեցնէ այն նմանութիւնները, որ գործակցութեան և անիշխանութեան միջև կան և որուն կը մերձենայ գործակցութիւնը այն մասամբ որ կը հիմնուի նա կամաւոր կազմակերպութեանց ստեղծման վրայ. սակայն գործակցութիւնը չի մերժեր Պետութիւնը, մանաւանդ թէ անոր օգտակար գործունէութեան շրջանակը կը ճանչնայ, մինչդեռ անիշխանութիւնը անոր բացարձակ յապատումը կը պահանջէ. նոյնպէս հակառակութիւն մը չի կայ գործակցական շարժման և քաղաքաբաշխութեան (municipalisation) հետ, մինչդեռ գործակցութիւնը կրնայ մրցակցի քաղաքաբաշխութիւններով և շատ ակզամ գերազանց կը հանդիսանայ՝ այն առաւելութեամբ թէ պաշտօնաձեռքի (bureaucratie) ազատ է:

Գործակցութիւնը Ռուսիոյ մէջ.

Հետաքրքրական հատորին յաջորդ գլուխները միայն Ռուսիոյ մէջի գործակցութեամբ կը զբաղին. շատերուն համար ճշմարիտ յայտնութիւն մը պիտի ըլլայ՝ երբ կարդան թոթովեանցի բազմահմուտ էջերուն մէջ այդ երկրին մէջ գործակցութեան հիւսնայի զարգացումը և բարեբեր արդիւնները, ասիկա, մեզի շատ լաւ կրնայ իբրև օրինակ ծառայել, մասնաւորապէս ռուսական գործակցութեան կեդրոնական և դաշնակցական ընտիր կազմակերպութեան համար, որ ամենէն աւելի արդիւնաբեր են՝ գործակցութեան տալով զօրութիւն և արգասիք:

Ռուսական գործակցութիւնը մասնաւորապէս երկրագործական է, թէև սպառումի

գործակցութիւնն ալ շատ զարգացած է գեղըղ կազմակարգին մէջ, վարկի գործակցութիւնը՝ որ մեծապէս տարածուած է Ռուսիոյ մէջ, կ'ամբողջացնէ երկրագործական գործակցութիւնը:

Շատ դժուար ըլլալով հոս ամփոփել այն բոլոր կարևոր դիտողութիւնները և հետաքրքրական թուերը, կը յանձնարարենք որ շահաքրքրողները դիմեն հեղինակին հմտալից գրքին՝ որ ճշմարիտ գանձարան մ'է այդ մասնաճիւղին:

Գործակցութիւն եւ ժողովրդական կեթութիւն.

Այս մասին խօսելուն մէջ քիչ մը պիտի երկարինք, որովհետև առ ի լոյս կը հանէ ռուսական գործակցութեան մասնակի կողմ մը, կրթական (cultural) կողմը, որովհետև ճիշդ կրթութեան ասպարէզին մէջի գործունէութիւնն է որ յատուկ արժանիք մը կու տայ ռուս գործակցական շարժումին:

Վերջերս ռուս գործակցական գրականութեան մէջ վիճաբանութիւն մ'ելաւ թէ արդեօք գործակցութիւնը պէտք էր թէ ոչ յանձն առնուլ ժողովրդական կրթութեան ասպարէզը՝ տարրական և միջին դպրոցներ հաստատելով և խնամելով, թէ հարկ էր միայն գործակցական կրթութեամբ բաւականանալ. մեծամասնութիւնը կը պնդէր թէ գործակցութիւնը չունէր ոչ միջոցներ և ոչ ալ պէտք էր ստանձնել Պետութեան վերաբերեալ պաշտօններ, Բայց վերջապէս խնդրը գործնական կերպով լուծուեցաւ Յենկէլովըայի (Խիչկ) փողովրդական Դրամատունէն՝ որ իր ծախսերով գիմնագիտ մը բացաւ. և ուրիշ գործակցախումբեր իր օրինակին հետեցան, դպրոցներ բանալով, կամ արդէն բացուած դպրոցներու յատուկ գումարներ կապելով և կամ ուսման թրշակներ հաստատելով գործակցականներու որդուց:

Մոսկուայի մէջ հիմնուեցաւ գործակցականներու դպրոց մը՝ գիւղի մէջ շրջող ուսուցիչներով:

Ռուս գործակցութեան՝ ի նպաստ ժողո-

վրդական կրթութեան ցոյց տուած գործունէութիւններէն մին է տպագրականը. Մոսկուայի սպառուով գործակցախումբերու Դաշնակցութիւնը՝ բոլոր աշխարհի գործակցական գրականութեան ամենամեծ կեդրոնն է, և աշխարհիս մէջ գոյութիւն ունեցող առաջին մատուրական գործակցախումբն է. այն մինակ գործակցական գրականութեամբ չի գոհանար, այլ ընդհանուր կրթութեան ո՛ր և է նիւթի մը կը տարածուի: Ռուս հեղինակներու գրութիւններէն զատ՝ յիշենք ի մասնաւորի մեր ազգին պարծանք թոթովմանցի գիրքը « Տեսական վարդապետարիւն, պատմութիւն և գործնականութիւն սպառուով գործակցութեան վրայ », որ չորս տպագրութեանց արժանացած է:

Այս Դաշնակցութիւնը ամէն տարի կը հրատարակէ շուրջ 700 հազար օրինակ օրացոյցներ գործակցականներուն համար, որ կը պարունակեն մարդկային համընդհանրեան յորդորող իրաւներ՝ ընկերական մեծախոհ հեղինակներէ քաղուած, նշանակելով իւրաքանչիւր օր՝ մեծ գործակցականի մը ծննդեան և մահուան թուականը, հայպէս՝ ըլլալով փոքր գործակցական հանրագիտակ մը՝ գործաւորին և գեղջուկին ձեռքը տրուած: Այդ օրացոյցները գործակցութեան շրջակայէն կ'ընեն ամենայն տիպի գիւղականներուն մէջ իսկ. մինչև իսկ Անգղիոյ մէջ կարելի չէ եղած այդպիսի մեծածաւալ ֆորականտ մ'ընել գործակցութեան. օրացոյցներուն կը միացնեն հազարաւոր գունատիպ քարտեր՝ մեծ գործակցականներուն զիմանկարներով, բովանդակ Ռուսիոյ մէջ ցրուելով զանոնք: Գործակցական ուրիշ տպարան մը կայ Մոսկուայի մէջ « Գործակցական Աշխարհ » անուամբ՝ մեր թոթովմանցէն կառավարուած: Կը հրատարակէ ամսականի մը և զանազան գործեր՝ օտար հեղինակներէ թարգմանուած, ինչպէս Մածածինիէն, Լ. Լուցցադդիէն և այլ գրական և զիւանագէտ նշանաւոր անձանց երկերն մեծագոյն յաջողակութեամբ մը:

Ժողովուրդի տուններ եւ Ժողովուրդական ու գեղջական լսարաններ.

Ձուտ Գործակցական գաղափարէն բրդախողայս հաստատութիւնները թոթովմանցի հատորին մէջ նկարագրուած են. առոնք կը գտնուին գիւղերու մէջ գեղջկական տուններու մօտ և կը պարունակեն գրատուն մը, ժողովասենեակ մը, շարժանկարի սենեակ մը և թէպէտ չունի մը:

Գործակցութեան յատուկ հաստատութիւններէն մին է Արտագոյնի Գեղջկական Լսարանը, գիւղացիները գործակցախումբերու մատակարարութեան պատրաստելու համար, ինչպէս նաև բոլոր զաւանդներու քաղաքներուն մէջ կան գործակցական ուսուցման դպրոցներ: Մոսկուայի Ժողովուրդական Լսարանին մէջ ալ տեղի կ'ունենան գործակցութեան դասընթացքներ, և նոյն իսկ գործակցական բարձրագոյն ուսուցման դպրոց մը հիմնուեցաւ, գործակցախումբերու գրասենեակով մատակարարուած:

Ռուս գործակցութիւնը հարիւր հազարաւոր ընկերներ կը ծախէ ժողովրդական կրթութեան համար, և այս գործունէութիւնը վիշքը կը գերադասէ արտաքին ո՛ր և է պետութեան բրած գործակցական ջանքերէն:

Ռուս գործակցութիւնը պատերազմի եւ յեղափոխութեան ժամանակ.

Թոթովմանցի գրքին հետաքրքրական զուխներէն մին կը կազմէ այս. Ռուսիոյ մէջ ալ սպառուով գործակցութիւնը շատ ազգու կերպով զսպեց շահագիտութիւնը ի նպատակ սպառող անհատին՝ պատերազմէն առթուած գիներու բարձրագոյն ժամանակ գծադրաբար թղթադրամի առատ արտադրութիւնը՝ գիներու շարունակական բարձրացումը կը պատճառէր՝ զոր գործակցութիւնը չէր կրնար զսպել. թղթադրամի արժէքի կորուստը շատ արագացաւ Բէրլինի պետութեան կողմէ՝ անթիւ և դիւրատար Գեյսելի կոչուած դրամաթուղթերու առատ արտադրութեան. վրայ հասնող պօլշեվիկութիւնը Ռուսիան զեռ

աւելի ողողեց Գերենկի թղթադրամներով՝ վերածելով Ռուսիան երկրի մը ուր սուղապրութեամբ (caro-viveri) ամենէն ահաւորն է և դրամը ծախայեզօրէն կորուսած է իր արժէքը:

Գործակցախումբերը՝ յեղափոխութեան ժամանակ՝ պոլշեվիկներուն հալածանաց ենթարկուեցան, բայց րաբքադպարար գործակցախումբերու ներկայացուցիչները դիւրաւ կրցան պոլշեվիկներուն հասկցնել թէ ազգայնականութեան (nationalisation) զաղափարը ո՛չ երբեք կրնայ գործակցական շարժման յատկացուի:

Բայց յամենայն դէպս՝ գործակցութիւնը հիմայ պոլշեվիկեան թռհրոհին մէջ միակ կենսական ուժն է, որուն վրայ Ռուսիան

կրնայ իւր վերածնութեան յոյսը դնել. « ճշմարիտ ուսմկավարութիւն մը կը ստեղծուի և կը կրթութի գործակցութեան ծոցին մէջ, և այս անոր համար որ Պետութեան մը աւերակներուն մէջ անխախտ և անսասան կանգնած է գործակցութեան զէնքը, այնպէս որ ինքն է որ ներկայ ընկերութեան ամբողջական կեանքը կ'ընդգրկէ »:

Կը շնորհաւորեն հայ ուսուցչապետին իր գնահատելի արտադրութեանց համար՝ մաղթելով որ շնորհէ մեր ազգային տնտեսական գիտութեան աւելի մեծ մղում մը և աւելի ընդարձակ ու մանրակրկիտ երկասիրութիւն մը Տնտեսական Հայաստանի վրայ...

ՄԻՀՐԱՆ ԵԼԻՒԿԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՕՂԼՈՒ ԵՐԳԵՐԸ

(ՓԵՐԱՆՔԵՐ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ)

Ն ԵՐԱՅՈՒԹԻՒՆ

Ժողովրդական բանահիւսութիւնը շատ աղքատ է Զուղահայերի մէջ. համարեա չկայ նրանց մէջ ժողովրդական-ինքնուրոյն երգեր — սիրային, պանդխտի, երգիծական, սգոյ, պարի և այլ լիբրեական — հովուերգական տաղեր, ինչպէս և զրոյցներ հէքիաթներ, առակներ, հանելուկներ և այլն: Այդ հանգամանքը պիտի բացատրուի նրանով, որ հայերը զարերից ի վեր ապրելով պարսիկների հետ, կորցրել են իրենց ազգային առանձնայատկութիւններից շատ բան և իւրացրել են այն, ինչ որ պարսկական է:

Այսպէս է Նոր-Զուղան: Սակայն ընդհակառակը, դրա փոխարէն Նոր-Զուղայի փէրիա և Զուրմահալ գաւառները հարուստ են աշուղական երգերով: Նրանք տուել են իրենց ծոցերից մի քանի ժողովրդական

բանաստեղծ — երգիչներ, որոնք ապրելով ժողովրդի մէջ, ժողովրդի սրտին մօտիկ, արտայայտել են նրա զգացմունքներն ու խոհերը, իղձերն ու յոյզերը, ուրախութիւնն ու վիշտերը, զանազան մօտիւններով և ելելջներով:

Սակայն ցաւելով պիտի նկատենք, որ նրանց մասին ոչինչ յիշած չէ մեր բանահիւսութեան պատմութեան մէջ, և մինչև այսօր ո՛չ նրանց երգերն է հաւաքւած և ուսումնասիրւած և ո՛չ էլ նրանց վերաբերեալ կենսագրական տեղեկութիւններ լոյս են տեսած. նրանք գրեթէ մոռացւած են: Մինչդեռ նրանք իրենց ժամանակին, իրենց երգերով մեծ դեր են խաղացել և հռչակ ու պատիւ վայելել:

Թէև ժողովուրդը սրբութեամբ պահել — պահպանել է նրանց անունները և նրանց